դարձուցին զկէնս իւրեանց յերկիրն Պաղեստինոյ. առին զԳազա, զԲեթլէհէմ և զԴիոսպօլիս, այն է Լիւդիա, և անտի դիմեալ պաշարեցին զքաղաքն Յոպպէացւոց, ուր ժողովեալ էին բազմութիւնք Արաբացւոց դիմադիր լինել նմա. այլ 'ի սաստկանալ պատերազմին արտաքուստ, 'ի պարտութիւն մատնեցան այլազգիք, և Գաղղիացիք առին ըզՅոպպէ, և սուր եդեալ կոտորեցին զԱրաբացիս և զբնակիչս իսկ. զօրքն աւարի առին զքաղաքն, եւ մտեալ 'ի վանս Հայոց կողոպտեցին զորս գտին անդ՝ և թողին զմիաբանսն 'ի թշուառութեան եւ զվանքն սահմանեցին հիւանդանոց զօրաց: Եւ դադարեալ զաւուրս ինչ՝ չու արարեալ գնացին 'ի վերայ Աքքէ քաղաքի, և պաշարեցին ըզնա, Մարտ 3: Իսկ տէր քաղաքին Ճէզար Փաշայ, ամրացուցեալ էր զնա և լցեալ բազմութեամբ զօրաց, և ոչ տայր թոյլ նոցա մերձենալ 'ի պարիսպն. զի թէպէտեւ Գաղղիացիք քանիցս սաստկութեամբ յարձակեցան 'ի վերայ նորա, այլ նկուն եղեալ 'ի քաջացն Օսմանցւոց յետս մղեցան, եւ տեւեաց պաշարումն մինչ 'ի Մայիս 10: Եւ տեսեալ թէ չէ հնար նուաճել զՃէզար Փաշայ և տիրել քաղաքին, մանաւանդ զի վտանգեալ իսկ էր բանակն Գաղղիական 'ի վերահաս ժանտախտէ, բարձին զպաշարումն և դարձան յետս, եւ թափեցին զցասումն բարկութեան իւրեանց 'ի վերայ Յոպպէ քաղաքի. կործանեցին զպարիսպն, արկին տուգանս 'ի վերայ բնակչաց. բաժին անկաւ կողոպտեալ վանացն Հայոց 100 քսակ արծաթոյ. զկնի աւերանաց և յափշտակութեանց, արկին հուր 'ի քաղաքն և յաճիւն դատեցին զբազում երեւելի շինուածս, ընդ որս տունք և մթերանոցք Հայոց. և յետ այսր ամենայնի չու արարեալ գնացին անդրէն 'ի կողմանս Եգիպտոսի: